ՀՀ ԿԳՄՄՆ

ԱՐԱՐԱՏԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ

ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹ

Քննարկվել և հավանության է արժանացել՝
ՀՀ ԿԳՄՄՆ «Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
«Սոցիալ-տնտեսագիտական և հաշվապահական հաշվառման» ամբիոնի 30.09.2022թ №3 նիստում

ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՌԻՍԿ

Ռ. Բաղդասարյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ..... 4
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ 10
ՌԻՍԿԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ 19
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ..... 23
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... 24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ձեռնարկատիրական գործունեությունը իրենից ներկայացնում է հաստատուն հիմքերով իրականացվող գործունեություն, որը հետապնդում է շահույթ և ունի զարգացման ու ընդլայնման միտում: Ձեռնարկատիրությունը առանձնահատուկ գործոն է, որի շնորհիվ իրականացվում է այլ գործոնների միավորումը: Այն իրար է միացնում գիտությունն ու գործի իմացության արվեստը:

Ձեռնարկատիրական գործունեության համակարգում գլխավոր տեղը պատկանում է ձեռներեցին, և նրա արդյունավետ գործունեությամբ է պայմանավորված ձեռնարկատիրական հաջողությունը:

Ձեռնարկատիրոջ համար որոշիչ է ռիսկի և նորարարության հետ կապված խնդիրների հաջող լուծումը:

Ռիսկը կորուստ կրելու հնարավոր վտանգ է: Ձեռնարկատիրական տեսանկյունից ռիսկը բացասական իրադրություն է: Ռիսկը լինում է երկու տեսակի՝ մաքուր և սպեկուլյատիվ, որոնց մասին մանրամասն կնշվի կուրսային աշխատանքում: Շուկայական տնտեսության մեջ ռիսկը հանդես է գալիս պաշտպանական ու կարգավորման գործոռույթներով և ղեկավարման որոշակի մեթոդներով:

Ձեռնարկատիրությունն իրականացվում է ձեռներեցի սեփական ռիսկի հաշվին: Ձեռներեցին անհրաժեշտ է մտածել, նոր ձևով իրականացնել գործունեության համար անհրաժեշտ ռեսուրսների արդյունավետ միավորում, որպեսզի դրանցից յուրաքանչյուրի միավորի հաշվով մեծ շահույթ ստացվի:

Ռիսկը անորոշությունն է ապագայի նկատմամբ: Այդ պատճառով այն կառավարելու համար հարկավոր է մշակել որոշակի սկզբունքներ.

- ռիսկի հայտնաբերում;
- ռիսկի գնահատում;
- ղեկավարման մեթոդների ընտրություն;
- այլ մեթոդների կիրառում;
- արդյունքների գնահատում:

ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից տնտեսագիտության մեջ ձեռնարկատիրական գործունեությունը (ձեռներեցության ընդունակությունը) աշխատանքի, հողի և կապիտալի հետ մեկտեղ դիտվում է որպես արտադրության ինքնուրույն գործոն: Ձեռնարկությունը յուրահատուկ գործոն է, որովհետև դրա շնորհիվ է իրականացվում արտադրության մյուս գործոնների միավորումը, համադրումը և գործադրումը տնտեսավարման միասնական գործընթացի մեջ:

Շուկայական հարաբերությունների ձևավորման և հետագա զարգացման փուլերում տնտեսության ցանկացած ոլորտում կարևորագույն դեր ու նշանակություն է ձեռք բերում ձեռնարկատիրական գործունեությունը, նրա կազմակերպման ձևն ու մակարդակը: Փաստորեն, ցանկացած տնտեսավարող սուբյեկտ, անկախ այն հանգամանքից՝ գտնվում է կայացման, զարգացման, հասունացման, թե անկման փուլում, միևնույն է, զբաղված է ձեռնարկատիրական գործունեության կազմակերպմամբ, այլ կերպ անհնար է ապահովել նրա առջև դրված գործա-բար նպատակները:

Այս առումով էական է ՝ձեռնարկատիրություն՝ և ՝ձեռնարկատիրական գործունեության կազմակերպում՝, նաև դրանց հետ կապված մի շարք հասկացությունների հստակ ընկալումը, դրանց սոցիալ-տնտեսական բնույթի բացահայտումը, որը բացի տեսականից, ունի նաև գործնական նշանակություն:

Ձեռնարկատիրությունը շահավետ նախաձեռնողական գործունեություն է ուղղված ար-տադրական ռիսկերի արդունավետ օգտագործման լավագույն եղանակների ընտրությանը և եկամտի ստացմանը: Այն նաև տնտեսավարման եղանակ է, որին բնորոշ է նախաձեռնությունը, նորարարությունը, տնտեսական պատասխանատվությունը, ճկունությունը և կոմերցիոն ռիսկը:

Ի. Շումպետերը նշում է, որ սեփականատիրոջ կարգավիճակը պարտադիր և որոշիչ հատկանիշ չէ ձեռնարկատիրությամբ զբաղվելու համար: Ըստ նրա՝ ձեռնարկատերն այն գործակալն է, որն իրացնում է յուրաքանչյուր անգամ արտադրության գործոնների նորանոր կոմբինավորումներ, իսկ ձեռնարկատիրոջ գործառնությունը դիսկրետ կատեգորիայ է և մշտապես ամրագրված չէ: Նման գործառնությունը կապված է ձեռնարկատիրոջ անձի որոշակի

առանձնահատկությունների՝ յուրահատուկ մոտիվացիայի, ինտելեկտի, բարձր կամքի ուժի և զարգացած ինտուիցիայի հետ: Շումպետերը ձեռնարկատիրական ֆունկցիան ներկայացնում էր որպես չորրորդ գործոն:

<<Էկոնոմիկս>> դասագրքի հեղինակներն առանձնացնում են մարդկային տաղանդի հատուկ ձևը՝ ձեռնարկատիրական ունակությունը, որպես առանձնահատուկ մարդկային ռեսուրս: Նրանց տեսակետի համաձայն՝ ձեռնարկատերը մի անձնավորություն է, որը նախաձեռնում է հողի, կապիտալի և աշխատանքի ռեսուրսների միավորումը ապրանքների թողարկման և ծառայությունների իրականացման մեկ միասնական գործընթացի մեջ: Բացի այդ, ձեռնարկատերը նորարար է, որը ձգտում է հիմքի վրա կազմակերպել նոր արտադրանքի թողարկումը, կիրառել նոր արտադրական տեխնոլոգիաներ, նա ռիսկի գնացող անձնավորություն է:

Հաճախ ձեռնարկատիրությունը լուսաբանվում է որպես որևէ նոր արտադրանք թողարկելու կազմակերպման գործընթաց, որի շնորհիվ եկամուտ է ապահովում և որի կապակցու-թյամբ ձեռնարկատերն իր վրա է վերցնում ֆինանսական, սոցիալական և բարոյական պատաս-խանատվություն:

Գոյություն ունի նաև այլ տեսակետ, որի համաձայն, ՝ձեռնարկատիրական ունակությունը՝ արտադրության գործոնների միավորման որոշումներ ընդունելու և ռիսկի գնալու ունակությունն է:

Այսպիսով, վերոհիշյալ հեղինակները ձեռնարկատիրությունը ներկայացնում են որպես տնտեսական ակտիվության մի հատուկ ձև, տնտեսության առանձնահատուկ հատված, ռիսկի գնալու և որոշումներ ընդունելու ունակություն:

Ակադեմիկոս Տ. Ի. Զասլավսկայան, որպես ձեռնարկատիրության բնորոշ ձևեր, առանձ-նացրել է՝

- շահույթի ստացման նպատակային որոշումը
- տնտեսական որոշումների ընդունման ազատությունը և ինքնավարությունը
- անձնական ռիսկի և պատասխանատվության վրա հիմնված ինքնուրույնությունը

Նշենք, որ ձեռնարկատիրության իրականացումը հիմնվում է որոշակի շահերի վրա՝ ինչպես մակրո, այնպես էլ միկրոմակարդակներում, այսինքն,

ձեռնարկատիրական գործունեության իրականացումը ձեռնտու է և պետությանը, և հասարակությանը որոշ վերապահում-ներով՝ նաև բոլոր ձեռնարկատերերին:

Պետությանը ձեռնտու է՝ որպես պետական բյուջեն հարկային մուտքերով ավելի շատ ապահովելու, հասարակությանը՝ որպես սպառողներին ավելի բարձրորակ և ավելի մեծ ծավալի ապրանքներ և ծառայություններ առաջարկելու տեսանկունից: Ի դեպ, սպառողների տեսանկյունից՝ որքան բարձր է մրցակցության աստիճանը, այնքան գները ցածր են կամ արտադրանքի որակը բարձր է, հետևաբար ձեռնարկատիրությունը ապահովում և իր մեջ ներառում է նաև մրցակցային ապահովման ֆունկցիան:

Ձեռնարկատիրությունը և դրա իրականացման գործընթացը պետք է պաշտպանված լինի օրենքով և ինքն էլ իր իրցման փուլում հարգի օրենքը, այսինքն, առկա է նաև իրվական ֆունկցիան:

Ձեռնարկատիրության իրականացման շնորհիվ բազմապատկվում է ազգային հարստությունը, ձևավորվում և գործում են նոր ձեռնարկություններ, բարձրանում է բնակչության կենսամակար-դակը, ակտիվորեն իրականացվում են ձեռնարկատիրոջ սոցիալական, հոգեբանաբական պահանջմունքները, զարգանում է սեփականատիրության ֆունկցիան:

Ձեռնարկատիրությունը ամենօրյա, քրտնաջան, հագեցած,խստապահանջ և նպատակասլաց աշխատատանքի արդյունք է: Այն ուղղված է հասարակական պահանջմունքների բավարարմանը, սակայն նրա անմիջական նպատակը, բուն շարժառիթը՝ նյութական շահն է:Տնտեսավարման պրակտիկայում ձեռնարկատիրությունը նույնացվում է ՝բիզնես՝ հասկացության հետ: <u>Բիզնես</u> ասելով հասկացվում է ցանկացած գործունեություն, որի նպատակը օգուտի, շահույթի ստացումն է: Բիզնեսը ցանկացած շահավետ զբաղմունք կամ գործունեություն է, մինչդեռ Ձեռնարկատիրական գործունեության նպատակը երբեմն կարող է լինել ոչ թե շահույթի, այլ որևէ օգտակար արդյունքի ստացումը:

Այսպիսով, ձեռնարկատիրությունը բիզնեսի ձևերից մեկն է, որը բնութագրվում է նորարարությամբ և ստեղծարար բնույթով:

Ժամանակակից տնտեսագիտության մեջ ձեռնարկատիրական գործունեության էությունը քննարկվում է 3 տեսանկուններով՝

1. որպես տնտեսական կատեգորիա հանդես է գալիս որպես տնտեսավարման հարաբերությունների վրա հիմնված տնտեսավարման հարաբերությունների ենթահամակարգ: Ձեռնարկատիրության՝ որպես տնտեսական կատեգորիայի, բովանդակությունն արտահայտվում էնրա օբյեկտով և սումյեկտով: Ըստ ձեռներեցության սուբյեկտի՝ գոյություն ունի ձեռնարկատիրական գործունեության 3 ձևեր՝անհատական,կոլեկտիվ և պետական, որոնք արտահայտում են սեփականության համապատասխան ձևին բնորոշ տնտեսական հարաբերությունները: Ձեռնարկատիրական գործունեության օբյեկտ էհանդիսանում արտադրության գործոնների արդյունավետ զարգացածզարգացած եղանակների ընտրությունը՝ առավելագույն եկամուտ ստանալու նպատակով:

2. որպես տնտեսավարման մեթոդ-տնտեսավարման ձևերի, եղանակների ամբողջություն է, որոնց նպատակը արտադրական ռեսուրսների արդյունավետ օգտագործման շնորհիվ առավել եկամտի ստացումն է: Ձեռնարկատիրական գործունեության՝ որպես տնտեսավարման մեթոդի, կարևորագույն հատկանիշներն են՝

- տնտեսավարող սուբյեկտների ինքնուրույնություն և անկախություն, որոշակի ազատությունների և իրավունքների առկայություն
- ընդունված որոշումների և դրանով պայմանավորված տնտեասական ռիսկի համար պատասխանատվություն, որը պայմանավորված է շուկայի անորոշությամբ և անկանխատեսելիությամբ
- առավելագույն կամ կայուն շահույթ ստանալու ձգտումը

3. որպես տնտեսական մտածողության տեսակ-բնութագրվում է այն առանձնահատուկ հայացքների և ընդունակությունների ամբողջությամբ, որով օժտված է ձեռներեցի անձը: Ձեռնարկատիրական գործունեությունը տնտեսավարման յուրահատուկ արվեստ է, տնտեսական ու կազմակերպական բնույթի ստեղծագործական գործունեություն է՝ հանուն շահույթի ստացման, որին բնորոշ է նախաձեռնության և նորարարության ազատությունը:

Գործնականում տարբերվում են ՝ձեռնարկատիրություն՝ և ՝ձեռներեց՝ հասկացությունները: Ձեռնարկատիրական գործունեության համակարգում կենտրոնական դեմքը ձեռներեցն է և նրա գործունեությամբ է պայմանավորված ձեռնարկատիրության հաջողությունը: Տնտեսագիտության մեջ ձեռներեցություն,

ձեռներեց հասկացություններն առաջին անգամ կիրառվել է դեռևս 18-րդ դարում, անգլիացի տնտեսագետ Ռ. Կանտիլյոնի կողմից: Ըստ նրա՝ ձեռնարկուն անորոշ, անկայուն եկամուտներ ունեցող անձնավորություն է, որի հիմնական ֆունկցիան է տարբեր ապրանքային շուկաներում առաջարկի համապատասխանությունը պահանջարկին: Շոտլանդացի Ա. Սմիթը ձեռներեցին բնութագրել է որպես մի մարդու, որը միշտ նկատի ունի իր սեփական շահը, օգուտը, ինչին հետամուտ լինելով՝ հաճախ ՝անտեսանելի ձեռքով՝ ուղղվում է հասարակության շահերին ծառայելու նպատակին:

- ձեռնարկատիրոջ ավելի մեծ աշխատունակությունը ֆիրմայի աշխատակիցների համեմատությամբ
- սեփական գործի բազմակողմանի և մասնագիտական խորը իմացությունը
- տնտեսության, հարկային, մաքսային, ֆինանսական, քաղաքականության, կառավարման և մարքեթինգի գերազանց իմացությունը
- կարողանալ ընտրել և սեփական գործի մեջ ընդգրկել լավագույն մասնագետներին՝ նրանց տալով լայն իրավասություններ
- աշխատանքի վարձատրությունն ուղղակի կապել ֆիրմայի գործունեության վերջնական արդյունքների հետ: Հետևել, որ կոլեկտիվի անդամների աշխատավարձը ցածր չլինի համանման այլ ֆիրմաների աշխատողների աշխատավարձից
- անմիջապես աշխատանքից ազատել այն աշխատակիցներին, ովքեր պատշաճ մակարդակով չեն կատարում իրենց աշխատանքային պարտականությունները
- ամենօրյա հսկողություն սահմանել կատարվող ծախքերի և ստացվող շահույթի վրա
- պատրաստ լինելու փակել սեփական գործը, եթե այն դառնում է ոչ շահութաբեր կամ վնասաբեր
- ձգտել բոլոր բնագավառներում միշտ գերազանցել մրցակիցներին:

Շուկայական տնտեսության պայմաններում ձեռներեցի կատարած ֆունկցիաները կարելի է բաժանել 3 խմբի՝ ռեսուրսային, կազմակերպչական և ստեղծագործական:

Ռեսուրսային ֆունկցիայի էությունն այն է, որ ձեռներեցն իր տրամադրության տակ գտնվող ֆինանսական միջոցներով ձեռք է բերում տնտեսական գործունեության համար անհրաժեշտ գործոններ ու ռեսուրսներ:

Կազմակերպչական ֆունկցիան արտահայտվում է նրանով, որ ձեռներեցն ապահովում է արտադրության գործոնների այնպիսի միացում և կոմբինացիա, որն առավել արդյունավետ է նպաստում նախատեսված տնտեսական նպատակային խնդրի լուծմանը:

Ստեղծագործական ֆունկցիան արտահայտվում է կազմակերպչական-տնտեսական նորարարությամբ, որի նշանակությունը հատկապես կարևորվում է ժամանակակից գիտատեխնիկական առաջադիմության և ոչ գնային մրցակցության ընդլայնման պայմաններում: Արագորեն աճում է գիտատեխնիկական մշակումների շուկան կամ ռիսկային բիզնեսը, որը կապված է տեղնիկայի և տեխնոլոգիայի նորույթների ներդրման հետ:

Ներկայումս զարգացած շատ երկրներում որոշակիորեն ընդգծված են 21-րդ դարի ձեռներեցության հեռանկարային ուղղվածությունները: Այսպես օրինակ, Ճապոնիայում մեծ տեղ է տրվում տեղեկատվական բիզնեսի զարգացմանը: Գերմանիայում, ԱնգլիայումՖրանսիայում շեշտը դրվում է արդյունաբերական տեխնոլոգիաների վրա: ԱՄՆ-ում ուշադրության կենտրոնում է աշխատողների ինտելեկտուալ մակարդակի բարձրացմանը:

ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման ձևերը և դրանց համապատասխան արտադրական ձեռնարկությունների տեսակները կարելի է դասակարգել՝ ելնելով մի կողմից սոցիալ–տնտեսական, մյուս կողմից՝ կազմակերպական բնույթի չափանիշներից:

Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկատիրական գործունեության հիմունքները,ձեռնարկատերերի իրավունքները և պարտականությունները, ձեռնարկությունների կազմակերպաիրավական ձևերը, դրանց ստեղծման,գործելու և գործունեության դադարեցման հիմքերը սանմանված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով:Ըստ օրենսգրքի՝ ձեռնարկատիրական է համարվում այն գործունեությունը,որն անձը իրականացնում է ինքնուրույն,իր ռիսկով:Դրա հիմնական նպատակն է գույքի օգտագործումից,ապրանքներ վաճառելուց,աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալը:

Ստորև թվարկենք ձեռնարկությունների հիմնական տեսակները և ներկայացնենք յուրաքանչյուր ձեռնարկության հակիրճ բնութագիրը:

Ձեռնարկատիրական գործունեության սոցիալ-տնտեսական ձևերը բնութագրում է ոչ միայն սեփականության սուբյեկտը, այլև տնտեսավարման սուբյեկտը:Այսինքն,ձեռներեցություն կամ բիզնեսի սոցիալ-տնտասական բնույթը պայմանավորված է սեփականության ձևերով:

Սեփականության ձևից կախված տարբերվում են ձեռնարկատիրական գործունեության պետական,կոլեկտիվ և անհատական /մասնավոր/ տեսակները:

Տանք ասվածի առավել հստակ մեկնաբանումը:<u>Պետական</u> ձեռներեցությունում տնտեսավարող սուբյեկտ է հանդիսանում պետությունը,որը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում պետական միջոցների հաշվին:

Այսպիսի ձեռնարկությունների բնորոշ գիծն այն է, որ նրանց պարտավորությունները սահմանվում են ըստ ունեցվածքի,որը կազմում է նրանց սեփականությունը:Ո՛չ պետությունն է պատասխանատվություն կրում նրանց պարտավորությունների դիմաց,և ո՛չ էլ նրանք՝ պետության պարտավորությունների դիմաց:

Անհատական (մասնավոր) ձեռնարկատիրությունը ուղղված է անձնական եկամտի կամ շահույթի ստացմանը:Այն կազմակերպվում է անհատական սեփականության հիման վրա,ինչպես նաև այնպիսի դեպքերում,երբ տնտեսվարող սուբյեկտը՝ անհատը,վարձակալում է ուրիշին պատկանող սեփականությունը/օրինակ,պետական ձեռնարկությունների վարձակալության դեպքում/:Անհատական ձեռնարկատերը կրում է լրիվ և անսահմանափակ պատասխանատվություն իր գործունեության արդյունքի համար՝ իր ամբողջ ունեցվածքով:Անհատական ձեռնարկատերը իրավունք ունի ստեղծել ձեռնարկություններ,ինքնուրույն որոշել իր գործունեության պրոֆիլը:

Անհատական ձեռնարկատիրության առավելությունները հանդիսանում են պետության կողմից մինիմալ վերահսկողություն,որը հնարավորություն է տալիս ինքնուրույն բաշխել շահույթը,շարժունակություն՝ ձեռնարկատերերի գործողությունների տեսանկյունից,և ընդունելի հարկային պայմաններ:

Կոլեկտիվ ձեռնարկատիրությունը տնտեսավարման այն ձևն է,որի դեպքում արտադրության միջոցները և արդյունքները հանդիսանում են մարդկանց տվյալ խմբի կոլեկտիվ սեփականություն:Կոլեկտիվ ձեռնարկատիրության մեջ տնտեսական օպերացիաները իրականացվում են կոլեկտիվ սուբյեկտի կողմից,որի համար էլ ձևավորվում են ընկերությունները:Վերջիններս կարող են հանդես գալ իրավաբանական և ոչ իրավաբանական անձի տեսքով:Իրավաբանական անձ է համարվում այն կազմակերպությունը,որը,որպես սեփականություն,ունի առանձնացված գույք և իր պատասխանատվությունների համար պատասխանատու է այդ գույքով,կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ,կրել պարտականություններ,դատարանում հանդես գալ որպես հայցվոր

Այժմ փորձենք նկարագրել ձեռնարկատիրական գործունեության կազմակերպաիրավական ձևերը:Կազմակերպության կողմից իրականացվող տնտեսական նպատակամետ գործունեությունը պետք է ունենա որոշակի կազմակերպաիրավական ձև,որը ձևավորում է մի շարք գործոնների ազդեցության ներքո: Դրանցից են՝ գործունեության ուղղվածությունը,կառավարման բնույթը,պատասխանատվության աստիճանը,հիմնադիր կապիտալի ձևավորման եղանակը,իսկ որպես որոշիչ գործոն՝ հանդես է գալիս կազմակերպության գույքի

հանդեպ ունեցած սեփականության ձևը:Յուրաքանչյուր ձեռնարկատեր բախվում է այն հարցի հետ,թե ինչ կազմակերպաիրավական ձև ընտրի՝ իր ընկերության գործունեությունը կանոնակարգելու համար:

են առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների:Առևտրային են այն կազմակերպությունները,որոնց հիմնական նպատակը շահույթի ստացումն է,իսկ ոչ առևտրայինը՝ որոնք այդպիսի նպատակ չեն հետապնդում:

Առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձանց թվին են դասվում տնտեսական ընկերակցությունները և ընկերությունները, կոոպերատիվները, առևտրայինների թվին՝ հասարակական և կրոնական կազմակերպությունները, միությունները,հիմնադրամները և օրենքով նախատեսված՝ հիշյալ հատկությամբ օժտված այլ կազմակերպությունները:

Տնտեսական ընկերակցություններ և ընկերություններ են համարվում այնպիսի առևտրային կազմակերպորթյունները,որոնց կանոնադրական կապիտալը բաժանված է հիմնադիրների/մասնակիցներ/ բաժնեմասերի:

Տնտեսական ընկերակցությունները կարող են ստեղծվել լիակատար ընկերակցությոան և կոմանդիտային/վստահության վրա հիմնված/ ընկերակցության ձևով:Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները չեն կարող հանդիսանալ տնտեսական ընկերակցության մասնակիցներ:Տնտեսական ընկերակցությունների լիակատար անդամներ կարող են լինել անհատ ձեռնարկատերերը և առևտրային կազմակերպությունները:

Կոմանդիտային ընկերակցության ավանդատուներ կարող են հանդիսանալ քաղաքացիները և իրավաբանական անձինք:

Իրենց հերթին,տնտեսական ընկերակցությունները կարող են հանդես գալ որպես այլ տնտեսական ընկերակցությունների հիմնադիրներ կամ մասնակիցներ:

Լիակատար ընկերակցություն է համարվում այն կազմակերպությունը,որի մասնակիցները ընկերակցության անունից զբաղվում են ձեռնարկատիրական գործունեությամբ և ընկերակցության պարտավորությունների համար պատասխանատվություն են կրում իրենց պատկանող գույքով:Անձը իրավունք ունի լինել միայն մեկ լիակատար ընկերակցության մասնակից:Ընկերակցության շահույթը և վնասները բաշխվում է նրա մասնակիցների միջև՝ ընկերակցության կանոնադրական

կապիտալում նրա բաժնեմասերին համամասնորեն:Ընկերակցութ-յան մասնակիցներից որևէ մեկի դուրս գալու կամ մահվան,անգործունակ կամ սնանկ ճանաչելու դեպքում ընկերակցությունը չի լուծարվում և կարող է շարունակել իր գործունեությունը:Լիակատար ընկերակցությունը լուծարվում է այն դեպքում,երբ ընկերակցության կազմում մնում է միայն մեկ մասնակից:Վերջինս իրավունք ունի վեց ամսվա ընթացքում ընկերակցությունը վերակազմավորել այլ տնտեսական ընկերության:

Կազմակերպությունների այս կազմակերպաիրավական ձևը լայն տարածում չունի և կիրառվում է միայն փոքր ու միջին կազմակերպությունների համար:

Վստահության վրա հիմնված կամ կոմանդիտային ընկերակցությունների մի մասը /լիակատար ընկերներ ընկերության անունից իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն և ընկերության պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում իր ամբողջ գույքով,իսկ մյուս մասը՝ կոմանդիտիստները կամ ավանդատուները,չեն մասնակցում նրա գործունեությանը:Ներկայացնել ընկերակցությունը և գործարքներ կնքել նրա անունից միայն կարող են լիակատար ընկերները,բայց ոչ՝ կոմանդիտիստները :

Կոմանդիտային ընկերակցության կոմանդիտիստները իրավունք ունեն ստանալու կանոնադրական կապիտալում ունեցած բաժնեմասին համապատասխան շահույթի մասը կամ այդ մասը հանձնել այլ ավանդատուի:

Վստահության վրա հիմնված ընկերակցությունը լուծարվում է նրա մասնակից բոլոր ավանդատուների դուրս գալու դեպքում:Սակայն լիակատար ընկերներն իրավունք ունեն վերակազմավորելու այդպիսի ընկերակցությունը լիակատար ընկերակցության:

Տնտեսական ընկերություններ կարող են ստեղծվել սահմանափակ պատասխա-նատվությամբ լրացուցիչ պատասխանատվությամբ և բաժնետիրական ընկերության ձևով:

Տնտեսական ընկերությունների մասնակիցներ կարող են հանդիսանալ ինչպես քաղաքացիները,այնպես էլ իրավաբանական անձինք:Ինչպես տնտեսական ընկերակցությունների,այնպես էլ տնտեսական ընկերությունների դեպքում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ չեն կարող լինել

մասնակիցներ:Տնտեսական ընկերությունները իրավունք ունեն հանդես գալ որպես այլ տնտեսական ընկերությունների հիմնադիրներ:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն/ՍՊԸ/ է հանդիսանում կոլեկտիվ կամ խառը սեփականության վրա հիմնված,իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող,սեփականատերերի պարտադիր գույքային մասնակցությամբ ձեռնարկությունը:

ՍՊԸ ստեղծելու համար պետք է առկա լինեն առնվազն երկու հիմնադիրներ: Սակայն, եթե գործելու ընթացքում մնում է միայն մեկ անդամ,ապա

ՍՊԸ ստեղծելիս պարտադիր կերպով ձևավորվում է ընկերության կանոնադրական հիմնադրամը,որն իրենից ներկայացնում է նախօրոք որոշված այն դրամա գլուխը,որն ընկերության անդամների կողմից պետք է մուծվի որպես ընկերության մասնակից դառնալու համար ներդրում:Կանոնադրական հիմնադրամի մեծությունը որոշվում է ընկերության հիմնադիրների կողմից,սակայն Հայաստանում չպետք է պակաս լինի 50000 դրամից:

Ներդրման վճարման մասին ընկերության մասնակցին տրվում է գրավոր վկայական,որը չի հանդիսանում արժեթուղթ,չի մասնատվում և չի կարող վաճառվել երրորդ անձի ՝ առանց ընկերության համաձայնության:

ՍՊԸ մասնակիցների թիվը սովորաբար սահմանափակվում է օրենսդրությամբ:Սահմանված քանակը գերազանցելու դեպքում այն մեկ տարվա ընթացքում պետք է վերակազմավորվի բաժնետիրական ընկերության,իսկ այդ ժամկետը լրանալուց հետո ՝ դատական կարգով լուծարվի:

ՍՊԸ մասնակիցները ընկերության ստանձնած պարտավորությունների համար պատասխանատվոնթյուն են կրում միայն իրենց ներդրած ավանդների արժեքի սահմաններում և չեն կրում գույքային պատասխանատվություն:

ՍՊԸ-ում կառավարման ֆունկցիաները բաժանված են ընդհանուր ժողովի և դիրեկցիայի միջև:Ժողովում մասնակիցների ձայների քանակը որոշվում է համապատասխանորեն իրենց բաժնի չափով բաժնետիրական կապիտալում:Այս կամ այն հարցերի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Դիրեկցիան իրականացնում է ՍՊԸ-ի օպերատիվ ղեկավարությու-նը:

Այսպիսով,ՍՊԸ-ն,որպես ձեռնարկատիրության կազմակերպաիրավական ձև հնարավորություն է տալիս սահմանափակել ռիսկը ներդրման չափով:Այն պահանջում է ավելի քիչ կապիտալ գործի վարման համար,տարբերվում է հաշվետվության պարզ համակարգով:

Տնտասական ընկերությունների շարքին են դասվում նաև լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերություններ :Այդպիսին է համարվում մեկ կամ միքանի անձանց հիմնադրած ընկերությունը,որի կանոնադրական կապիտալը բաժանված է կանոնադրությամբ սահմանված մասերի:Լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցները ընկերության պարտավորությունների համար կրում են համապարտ սուբսիդիստ պատասխանատվություն:Սա նշանակում է,որ լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերության գույքի անբավարար լինելու դեպքում կազմակերպության պարտավորությունների կատարման համար նրա մասնակիցները պատասխանատվություն են կրում իրենց գույքով:Մասնակիցներից մեկի սնանկության դեպքում նրա պատասխանատվությունը բաշխվում է մյուս մասնակիցների միջև՝ նրանց ներդրած ավանդներին համամասնորեն:

Լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների սուբսիդիար պատասխանատվությունը առավելություններ է ընձեռում վարկերի ստացման ժամանակ,բարձրացնում է ընկերության ,մասնակիցների պատասխանատվությունը գործարքների և գործունեության արդյունքների նկատմամբ,հնարավորություն է տալիս ընդլայնել գործունեության ծավալները:Այս կազմակերպաիրավական ձևը 1995թ-ից կիրառվում է Ռուսաստանի Դաշնությունում,իսկ 1998թ-ից՝ նաև մեր հանրապետությունում:

ԲԸ կարող է ստեղծվել ինչպես մի քանի անձանց,այնպես էլ մեկ անձի կողմից:Սակայն նշենք,որ որպես միակ մասնակից,ԲԸ-ը չի կարող ունենալ մեկ անձից բաղկացած մեկ այլ տնտեսական ընկերություն:

Գոյություն ունի ԲԸ-ի երկու տեսակ՝ փակ և բաց:Փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերը բաշխվում են միայն նրա հիմնադիրների կամ նախապես որոշված անձանց միջև:Նման ընկերությունը իրավունք չունի անցկացնելու իր թողարկած բաժնետոմսերի բաց բաժանորդագրություն կամ էլ դրանք առաջարկելու անսահմանափակված թվով անձանց: ՓԲԸ մասնակիցների թիվը չպետք է գերազանցի

օրենքով սահմանված քանակը՝ քսանհինգ բաժնետերեր:Հակառակ դեպքում այն մեկ տարվա ընթացքում պետք է վերակազմավորվի ԲԲԸ-ի,իսկ այդ ժամկետը լրանալուց հետո՝ լուծարվի:

Այն բաժնետիրական ընկերությունը,որի մասնակիցները առանց մյուս բաժնետերերի համաձայնության կարող են օտարել իրենց պատկանող բաժնետոմսերը,համարվում է ԲԲԸ:ԲԲԸ-ի մասնակիցների կազմը կարող է փոփոխվել բաժնետոմսերի ազատ առք ու վաճառքի հետևանքով:

ԲԲԸ-ները սահմանափակ,հնարավորություն ունեն կապիտալի ներգրավման, բաժնետերերի թվի մեծացման,որի շնորհիվ էլ շուկայական տնտեսության պայմաններում բաժնետիրական ընկերությունների այս տեսակը առավել լայն տարածում է ստացել:

Տնտասական ընկերություններից է նաև դուստր տնտեսական ընկերությունը:Այն իրավաբանական անձ հանդիսացող ընկերություն է որի ամբողջ գույքը սեփականության իրավունքով պատկանում է իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող մեկ այլ ընկերություն,ինչպես նաև հասարակական կամ կրոնական կազմակերպություն:

Դուստր ձեռնարկություն կարող են հիմնադրել կոլեկտիվ սեփականության վրա հիմնված ձեռնարկությունները,շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերությունները:Ընդ որում,հիմնադիրների համար արգելված գործունեության տեսակները արգելվում են նաև դրանց դուստր ձեռնարկությունների համար:

Դուստր ձեռնարկությունը պատասխանատվություն չի կրում հիմնական ձեռնարկության պարտքերի համար:Եթե հիմնական ձեռնարկության պարտադիր ցուցումները կատարելու հետևանքով դուստր ձեռնարկությունը վնասներ է կրում,ապա նրա մասնակիցները կարող են պահանջել հիմնական ձեռնարկությունից փոխհատուցել այդ վնասները:Իսկ դուստր ձեռնարկության սնանկացման դեպքում հիմնական ձեռնարկությունը համապարտ պատասխանատվություն է կրում դուստր ձեռնարկության պարտքերի կատարման համար:

Ձեռնարկատիրական գործունեության հաջորդ կարևոր կազմակերպաիրավական ձևը կոոպերատիվն է:Կոոպերատիվ է համարվում այն կամավոր միավորումը, որը հիմնված է մասնակիցների անդամության վրա և ստեղծվել է իր անդամների գույքային

փայավճարների միավորման միջոցով:Կոոպերատիվի սեփականություն հանդիսացող գույքը բաժանվում է նրա անդամների փայերի:Եթե կոոպերատիվի անդամը ցանկանում է դուրս գալ նրա կազմից,ապա նրան պետք է վճարվի իր փայի արժեքը կամ տրվի դրան համապատասխան գույք: Սակայն, եթե կոոպերատիվի անդամը կանոնադրությամբ իր վրա դրված պարտավորությունները չի կատարում,ապա ընդհանուր ժողովի որոշմամբ կարող է հեռացվել կոոպերատիվից:Այս դեպքում հեռացված անդամը իրավունք ունի ստանալ ուշակի փայ և կանոնադրությամբ նախատեսված այլ վճարներ:

Կոոպերատիվի անդամի մահվան դեպքում նրա ժառանգները դառնում են կոոպերատիվի անդամ:

Կուպերատիվը կարող է կամովին վերակազմավորվել կամ լուծարվել միայն ընդհանուր ժողովի որոշմամբ:

Ոչ առևտրային են համարվում այն կազմակերպությունները,որոնք շահույթ ստանալու նպատակ չեն հետապնդում և ստացված շահույփը չեն բաշխում մասնակիցների միջև:Ոչ առևտրային կազմակերպությունները կարող են ստեղծվել հասարակական միավորումների,հիմնադրամների,իրավաբանական անձանց միությունների և այլ ձևերով:Այսպիսի կազմակերպությունները կարող են իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն միայն այն դեպքում,երբ դա ծառայում է կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացմանը:

Ոչ առևտրային կազմակերպություններից են.

1.Հասարակական միավորումներ:Այդպիսին են հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջմունքներ բավարարելու համար կազմված՝ քաղաքացիների կամավոր միավորումները:Հասարակական միավորմանը նրա հիմնադիրների կողմից հանձնված գույքը համարվում է կազմակերպության սեփականությունը:Հասարակական միավորումների մասնակիցները կազմակերպությանը հանձնած իրենց գույքի նկատմամբ սեփականության իրավունքներ չեն պահպանում:Միավորման լուծարման դեպքում նրա գույքը օգտագործվում է կանոնադրությամբ նախատեսված նպատակների համար,իսկ եթե դա հնարավոր չէ,փոխանցվում է պետական բյուջե:

2.Հիմնադրամներ: Հիմնադրամը քաղաքացիների և իրավաբանական անձանց

կամավոր վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող կազմակերպություն է,որը հետապնդում է

սոցիալական,բարեգործական,մշակութային,կրթական կամ այլ հանրօգուտ նպատակներ: Հիմնադիրները պատասխանատվություն չեն կրում իրենց ստեղծած հիմնադրամի պարտավորությունների կատարման համար:Հիմնադրամի լուծարման դեպքում նրա գույքը ուղղվում է հիմնադրամի նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ փոխանցվում է պետական բյուջե:

Ձեռնարկատիրական գործունեության կազմակերպաիրավական ձևերը՝



ՌԻՍԿԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ռիսկ ասելով անհրաժեշտ է հասկանալ կորուստ կրելու հնարավոր վտանգը, որը բխում է երևույթների և մարդկային հասարակության գործունեության առանձնահատկություններից: Ռիսկը՝ որպես պատմական կատեգորիա, ծնունդ է առել մարդկության զարգացման վաղ ժամանակաշրջանից: Մարդիկ վստահ չեն եղել, որ կբավարարվեն իրենց կենսաբանական, անվտանգության և այլ պահանջմունքները: Հետագայում ապրանքադրամական հարաբերությունների ձևավորման և զարգացմանը զուգընթաց ռիսկը դարձավ նաև տնտեսագիտական կատեգորիա: Դա կապված է այն հանգամանքի հետ, որ տնտեսական պրոցեսի վրա ազդում են մեծ փոփոխական գործոններ, երբ նախօրոք միարժեք ձևով հնարավոր չէր կանխատեսել դրանց հանդես գալու կոնկրետ զուգորդությունները: Այսինքն, տնտեսական իրավիճակի անորոշությունը պատճառ է հանդիսանում, որ գործունեության հնարավոր արդյունքները տարբեր ցուցանիշներով հանդես գան: Որոշակի տնտեսական կատեգորիա՝ ռիսկի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն որոշակի իրավիճակներում կարող է վնասի պատճառ հանդիսանալ, իսկ հանգամանքների մեկ այլ զուգորդության պայմաններում նման հետևանքներ չունենալ: Ընդհանուր առմամբ ռիսկային ներազդեցությունների հանդես գալու հետևանքով հնարավոր են հետևյալ 3 բնույթի ելքերը՝

1. դրական (շահում, շահույթ, հաղթանակ)
2. բացասական (վնաս, պարտություն)
3. զրոյական (վերադարձ ելակետային դիրքին)
4. Տնտեսական գործունեության մեջ ռիսկի հիմնախնդրի հետ կապված անհրաժեշտ է նշել, որ այն օբյեկտի երևույթ է, այսինքն, եթե իրականացվում է որև է գործոունեություն, ապա ռիսկն անպայմանորեն գոյություն ունի՝ անկախ նրանից՝ հաշվի են առնում, թե անտեսում են այն:

Մեզ մոտ ռիսկի խնդրի ուսումնասիրությունն առավել հրատապ է ներկայումս՝ պայմանավորված ՀՀ-ում անցումային փուլի բարձրացման առանձնահատկություններով, երբ ուղիներ են փնտրում տնտեսության արդյունավետության բարձրացման համար: Նշենք, որ էքստենսիվ զարգացման

պայմաններում կառավարումն առավելապես իրականացվում էր վարչա-կարգադրական եղանակներով, իսկ պլանավորվող ցուցանիշների հաշվարկների հիմքում ընկած էր նախորդ ժամանակահատվածում ձեռք բերված փաստացի մակարդակը: Այս պայմաններում գերիշխում էր այնպիսի գործոնների օգտագործումը, ինչպիսիք են վերլուծությունը և բացահայտված թերությունների վերացմանը նպաստող միջոցառումների ձեռնարկումը: Սրա հետևանքն այն էր, որ հատկապես ստորին օղակներում չէին քննարկվում զարգացման այլընտրանքային ուղիների հնարավորությունը, համարյա ուշադրություն չէր դարձվում գործունեության արդյունքների վրա պատահական գործոնների հնարավոր ազդեցությանը: Բնականաբար, հաշվի չէր առնվում ռիսկի գործոնը:

Անցումը ինտենսիվ զարգացմանը, առավելապես օգտագործելով կառավարման տնտեսական մեթոդները, խնդիր է դնում գտնել զարգացման ավելի նպատակահարմար ուղիներ, հետևաբար այս ընթացքում ծագում են անորոշ իրավիճակներ, անհրաժեշտություն է առաջանում հաշվի առնել դրանք, գնահատել պատահական գործոնները: Այսպիսով, տնտեսավարման նոր պայմաններում առաջանում են այնպիսի օբյեկտիվ իրավիճակներ, երբ տնտեսավարող սուբյեկտները ստիպված են դիմել ռիսկի: Այս դեպքում ռիսկի հիմքում ընկնում է ցանկացած արդյունքին արագորեն հասնելու խնդիրը: Ռիսկն ընդգրկում է մադկային կյանքի բոլոր ոլորտները: Առանց ռիսկի հնարավոր չէ զարգացմանը նպաստող այնպիսի շարժիչ ուժերի կյանքի կոչելը, ինչպիսիք են նախաձեռնությունը, նորարարությունը, ձեռներեցությունը:

Հարց է ծագում, իսկ ի՞նչ է իրենից ներկայացնում ռիսկը: Ռիսկը գործունեություն է՝ արդյունքի հասնելու հավանականության հաշվառմամբ: Այն ենթադրում է հնարավոր վտանգ, անհաջողություն, անհաշվենկատ գործողություն՝ բարեհաջող ելքի հույսով: Ամենօրյա կյանքում ռիսկ բառը օգտագործվում է որպես վտանգի առկայություն, բարեհաջող ելքի փոքր հավանականություն: Բայց տնտեսական կյանքում ռիսկը չի կարելի հանգեցնել միայն վտանգին, կորստին, անհաջողությանը: Նման տեսակները ճիշտ չի արտահայտում ռիսկի բովանդակությունը, և դրանով թերագնահատվում է ռիսկի տեղը կառավարման բնագավառում:

□Ռիսկ□ հասկացությունը գիտական բովանդակությունը պարզելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ռիսկային իրավիճակ հասկացությունը: Բազմաթիվ տնտեսական, տեխնոլոգիական և այլ որոշումներ ընդունելիս շատերը բախվել են իրվիճակների, որոնք միանշանակ լուծումներ չեն ունեցել: Այն իրավիճակները, երբ մի քանի տարբերակներից որոշում ընտրելու անհրաժեշտություն էառաջանում, երբ այդ որոշումների որդյունքները կարող են գնահատվել այս կամ այն չափի հավանականությամբ, անվանում են ռիսկային: Վերջինս առանձնահատկությունն այն է, որ անորոշության պայմաններում լավագույն որոշում ընտրելու համար աշխատողը կարող է օգտվել տարբեր մեթոդներից, հաշվարկել իրադարձությունների հավանական ազդեցությունը: Ռիսկը մշտապես կապված է ռիսկային իրավիճակի հետ, հետևաբար այն ծագում է միյան այն ժամանակ, երբ որոշումներն ընդունվում են անորոշության պայմաններում, երբ պահանջվում է ընտրություն կատարել մի քանի տարբերակներից: Ընդ որում, տարբեր մեթոդների կամ նախորդ ժամանակաշրջանի փորձի, բնազդի միջոցով հնարավոր է գնահատել նպատակին հասնելու կամ անհաջողության հավանականությունը: Այսպիսով, ռիսկային իրավիճակ չի ծագում, երբ բացակայում է անորոշությունը, տարբերակ ընտրելու հնարավորությունը կամ անհնար է սահմանել ընդունված որոշումն իրականացնելու հավանականությունը:

Նշվածների հիման վրա կարելի է սահմանել ռիսկը, այն անորոշության պայմաններում ընտրված որոշումն իրականացնելու ուղությամբ գործունեություն է, երբ հաշվի է առնված հաջողության հասնելու, անհաջողության կամ առաջադրված նպատակից շեղվելու հավանականությունը:

Վերը նշվածներից եզրակացնում ենք, որ ռիսկը չի ենթադրում միայն վտանգ կամ վնաս: Այն առաջին հերթին նպատակաուղղված է դեպի գործունեության հաջող ելքի կամ նպատակից որոշ շեղումները:

Կախված ռիսկային իրադարձությունների հետևանքների բնույթից՝ բոլոր տիպի ռիսկերը բաժանվում են 2 խմբի՝

1. զուտ կամ մաքուր ռիսկեր
2. սպեկուլյատիվ ռիսկեր

- բնական
- էկոլոգիական

- քաղաքական
- տրանսպորտային
- գույքային
- արտադրական
- առևտրային

Բնական ռիսկերը հանդես են գալիս երկրաշարժերի, փոթորիկների, համաճարակների, ջրհեղեղների և համանման այլ իրադարձությունների հանդես գալու դեպքում:

Էկոլոգիական ռիսկերին են դասվում այն իրադարձությունները, որոնք վնասի պատճառ կարող են հանդիսանալ շրջակա միջավայրի էկոլոգիական պայմանների վատթարացման հետևանքով:

Քաղաքացիական ռիսկերին են դասվում նրանք, որոնք վնասի պատճառ են հանդիսանում պետության վարած տնտեսական ազդեցության տակ:

Տրանսպոչտային ռիսկերի մեջ ներառվում են այն իրադարձությունները, որոնք վնասի պատճառ կարող են հանդիսանալ տրանսպորտի տարբեր տեսակներով բեռների փոխադրման ձախողման դեպքերում:

Գույքային ռիսկերը հանդես են գալիս դրանց նկատմամբ անտարբեր վերաբերմունքի, գողության, դիվերսիայի և համանման այլ դեպքերում:

Արտադրական ռիսկերն առնչվում են արտադրական պրոցեսների նորմալ ընթացքի խախտման և պարապուրդների հետ:

Առևտրային ռիսկերը հանդես են գալիս, երբ գնորդները ձեռք բերված ապրանքների դիմաց վճարումների ժամկետները խախտում են կամ ընդհանրապես հրաժարվում են վճարել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ձեռնարկատիրական գործունեությունը կարելի է դիտարկել որպես արտադրության ընդհանուր գործոն աշխատանքի, հողի և կապիտալի հետ միասին: Ձեռնարկատիրության բովանդակությունը, գործառույթները նորարարություն են տնտեսության բոլոր ոլորտներում: Այն սեփական գործ կազմակերպելու համար նյութական և դրամական արժեքներ տնօրինող անձանց նախաձեռնող, նպատակասլաց, մտավոր և հոգևոր գործունեություն է: Ձեռնարկատիրության հիմնական գործառույթն է՝ սպառողներին հասցնել և իրացնել ապրանքներն և ծառայությունների որոշակի քանակություն և դրանցից ստանալ շահույթ: Այն նպատակին հասնելու համար ձեռներեցը դուրս է հանում բարձրորակ և սպառողներին անհրաժեշտ ապրանքներ և ծառայություններ: Ձեռներեցները պետք է ունենան իրենց գործին բնորոշ, առանձնահատուկ տնտեսական նախաձեռնողական ակտիվություն:

Ձեռնարկատերերը պետք է ռիսկի դիմեն, իրենց տրամադրության տակ եղած միջոցներով, չպետք է ջանք ու ժամանակ խնայեն, պետք է գնորդներին առաջարկեն որքան հնարավոր է նոր որակյալ ապրանքներ և համապատասխան ծառայություններ: Ձեռնարկատիրությանը բնորոշ գծեր են՝

1. քաղաքացիների և մարդկանց խմբերի ինքնուրույն գործունեությունը;
2. գործունեության ռիսկայնությունը և միջավայրի դիմադրությունը;
3. բիզնեսի նպաստումը:

Ձեռնարկատիրական գործունեության ընթացքում բարձր ռիսկայնության առաջացման խթան կարող է հանդիսանալ այն, որ ձեռնարկատերերը իրենց միջոցները ցածր շահութաբերության և արտադրողականության ոլորտից տեղափոխում են ավելի բարձր շահութաբերության ոլորտ: Ռիսկի աստիճանը հասնում է առավելագույնի, նոր գործ սկսելու պահին, երբ դեռևս ամբողջական չեն բոլոր պայմաններն ու գործոնները: Բայց հենց դրանով են պայմանավորված բիզնեսի արդյունքները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Խմբ. խորհուրդ Հ. Ղուշչյան, Գ.Կիրակոսյան,Ա. Մարկոսյան՝Ձեռներեցի սեղանի գիրք՝,Երևան Տնտեսագետ,
2. Հայրապետյան Լ.՝Կոմերցիոն ռիսկ՝, Երևան Տնտեսագետ 2015
3. Մելքումյան Մ.՝Ձեռնարկատիրություն և Ներդրումներ
4. Ֆինանսական ընդհանուր տեսություն , ֆինանսներ, ձեռնարկությունների ֆինանսներ, ձեռնարկությունների տնտեսագիտություն. Ուսումնական ձեռնարկ, Վ. Վարդանյան, Երևան 2005
5. Ձեռնարկատիրական գործունեության կազմակերպում, Մ. Մելքումյան, 2007
6. Տնտեսագիտության տեսություն, Գ. Ե. Կիրակոսյան, 2000
7. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, Երևան, 1998